ԾՆՈՂԱՎԱՐՄԱՆ ՈՃԵՐ

ԾԻՀՏ ԸՆՏՐՎԱԾ ԾՆՈՂԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՃԸ ԿԱՐՈՂ Է ՄԵԾԱՊԵՍ ԱԶԴԵԼ ԵՐԵԽԱՅԻ ԱՊԱԳԱՅԻ ՎՐԱ

Ծնող-երեխա հարաբերությունները ամենանուրբ և ազդեցիկն են մարդու կյանքում, նրանք հիմք և մոդել են հանդիսանում բոլոր մնացած հարաբերությունների համար: Ուստի ծնողի պատասխանատվությունն ու զգոնությունը մշտական են:

Ծնող-երեխա հարաբերությունների որակը մեծապես կախված է ընտրված ծնողական ոճից: Հարաբերությունները մտերմիկ, ջերմ, կառուցողական կլինեն, թե ընդհակառակը՝ սառը, անտարբեր, վախի վրա հիմնված, կրկին ու կրկին մեծապես կախված են ծնողի միջամտության ձևերից:

Գիտական հետազոտությունները թույլ են տալիս փաստել, որ գոյություն ,ունեն ծնողավարման բազմապիսի ոճեր և դրանց համադրություններ: Սակայն հիմնականում առանձնացնում են հետևյալ չորսը՝

- **ավտորիտար**
- **հեղինակավոր**
- **թույլատրող (ներողամիտ)**
- **չներգրավված**

Ծնողավարման ոճերը կարող են կախված լինել ծնողի տարիքից, փոփոխվել տարբեր երեխաների դեպքում: Սակայն, ծնողավարման որևէ ոճ սովորաբար գերակայում է: Ծնողավարման ոճերի առանձնացման հիմնական չափանիշներն են՝ ծնողական վերահսկողությունն ու ծնողական արձագանքման ձևը (այն հուզական, վարքային արձագանքը, որ տալիս է ծնողը երեխային): Այս երկու չափանիշների տարբեր համադրություններից առանձնանում են թվարկած հիմնական չորս ոճերը:

Այս նյութը ստեղծվել է Եվրոպական միության և ՅՈՒՆԻՍԵՖ-ի աջակցությամբ: Բովանդակության համար պատասխանատվություն է կրում մանկական և կրթության հոգեբանների հայկական ասոցիացիան, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության կամ ՅՈՒՆԻՍԵՖ-ի տեսակետները: